

# Հիսուս Քրիստոսը մկրտվեց

Հովհաննես Մկրտիչը մարգարե էր: Նա մարդկանց ուսուցանեց Հիսուս Քրիստոսի մասին: Մի օր Հովհաննես Մկրտիչը մկրտում էր մարդկանց Հորդանան գետում Այնուհետև եկավ Հիսուսը: Նա Հովհաննեսին խնդրեց մկրտել Իրեն:

Հիսուսն ասաց, որ Երկնային Հայրը պատվիրել է բոլորին մկրտվել: Նա ցանկանում էր հնազանդվել Երկնային Հորը: Նա ցանկանում էր մեզ օրինակ ծառայել:

Հովհաննեսը մկրտեց Հիսուսին Հորդանան գետում: Երբ Հիսուսը դուրս եկավ ջրից, մարդիկ լսեցին Երկնային Հոր ձայնը: Նա ասաց. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հավանեցի»:

Մկրտվելով՝ մենք կարող ենք հետևել Հիսուս Քրիստոսին: Երկնային Հայրը երջանիկ է, երբ մենք հետևում ենք Իր Որդուն: ●

**Հեռացրեք այս էջը և ծալեք այն կիսով չափ: Ապա բարձր պահեք նկարը՝ մինչ կպատմեք պատմությունը:**




*Այս պատմությունը կարող ենք կարդալ Մատթեոս 3 գլխում:*



ՆԿԱՐԸ՝ ԳՐԵԳ ՕԼՍԵՆԻ